ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2011թ-ի հուլիսի 13-ին ժամը 15:00-ին Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավար՝ Սամվել Զեյնալյանը ներկայացրեց 01.01.2011թ-ից 01.07.2011թ կիսամյակային հաշվետվությունը՝ Արմավիրի մարզի գյուղատնտեսության վարչության գյուղ բաժնի պետ ՝ Վ. Աբրահամյանի, համայնքի ավագանու անդամների, գյուղապետարանի, մանկապարտեզի աշխատանքային կոլեկտիվի և համայնքի 50 բնակիչների մասնակցությամբ:

Համայնքի ղեկավարը իր հաշվետվությամբ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում գյուղապետարանի կատարած աշխատանքները մանրամասնորեն:Ելույթից հետո տեղի ունեցավ քննարկումներ համայնքի բնակիչների մասնակցությամբ: Քննարկվեցին մի շարք հարցեր:

Համայնքի Կորյունի, Ագաթանգեղոսի , Հայկի և Իսահակյան փողոցների բնակիչները իրենց շնորհակալությունը հայտնեցին իրենց բնակարաններում խմելու ջրի աշխատանքները սկսելու կապակցությամբ, իսկ համայնքի Դպրության, Վարուժանի, Օտյանի փողոցների բնակիչները դժգոհեցին, որ իրենց փողոցներում չունեն խմելու ջուր, օգտվում են խորքային ջրերից , իսկ խմելու ջուր բերում են անձնական մեքենաներով:

Համայնքի Հ.Շիրազի 25 հասցեի բազմաբնակարան շենքի բնակիչները դժգոհում էին իրենց անմխիթար վիճակից, որ չունեն կոյուղի, տանիքը կաթում է, չի լուծվել իրենց բնակարանների սեփականության իրավունքի վկայականների խնդիրը:

Բնակիչները դժգոհում էին, որ աղետների և հիվանդությունների պատճառով տուժել է գյուղատնտեսությունը՝ սակավ է ծիրանը, խաղողի դաշտերում համատարած հիվանդություն է տարածված: Ոռոգան ջրի թանկացման պատճառով համայնքի սեփականաշնորհված հողատարածքների մեծ մասը մնացել է անմշակ:

Եվս մեկ անգամ խոսվեց դպրոցի անմխիթար վիճակից և բնակիչները շեշտեցին, որ շուտով կգա սեպտեմբեր, իսկ իրենց փոքրահասակ երեխաներից շատերը պետք է թակեն այլ դպրոցների դռներ:

Իր եզրափակիչ խոսքում գյուղ բաժնի պետ՝ Վ.Աբրահամյանը, համայնքի կատարած աշխատանքները գնահատեց բավարար՝ մաղթելով համայնքի ղեկավարությանը աշխատանքները շարունակել ի բարորություն համայնքի բնակչությանը և հույս հայտնեց , որ տարվա երկրորդ կիսամյակում լուծում կստանան բարձրացված հարցերից շատերը:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/

Քարտուղար՝ /Հ.Ներսիսյան/

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՌ 01.01.2011թ ՄԻՆՉԵՎ 01.07.2011թ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Հարգելի համագյուղացիներ հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հաջողվել է իրականացնել հետևյալ աշխատանքները:

Ֆինանսական մաս.

Եկամուտներ (մուտքային մաս)

Հ/Հ	Հավաքագրված հարկի անվանումը	Պլանը կիսամյակ.	Փաստացի կատարում	%
1	գույքահարկ շենք, շինություն	775,0	631,1	81
2	գույքահարկ փոխադրամիջոցներից	2065,0	1338,1	64,8
3	հողի հարկ	3700,0	3556,5	95
4	վարձ.հողերի վճար	260,0	49,9	19,2
5	այլ ոչ հարկային եկամուտներ	493,0	770,8	156,3
6	տեղական տուրքեր	120,0	78,5	65,4
7	դոտացիա	7461,9	7461.9	100
	ԸՆԴԱՄԵՆԸ	14874,9	13886,8	93,4

Ծախսային մաս

Հ/Հ	Ծախսված գումարի ուղվածությունը	Կիսամյակային պլան	Փաստացի	%
1	գ/ա աշխատավարձ	5785,0	5139,5	88,8
2	Պարգևատրման դրամ	425,0	315,0	74,1
3	Սոցալային վճարներ	1050,0	898,0	85,5
4	էներգետիկ ծառայություն	350,0	250,0	71,4
5	համակարգչային ծառայություն	15,0	21,6	144
6	կապի ծառայություն	75,0	50,0	66,7
7	ընդհանուր բնույթի այլ ծառայու.	150,0	158,7	105,8
8	մեքենաներ և սարքավորումներ	75,0	28,0	37,3
9	գրասենյակային նյութեր	200,0	200,0	100
10	Տրանսպորտի նյութեր	300,0	300,0	100
11	աղբահանում	500,0	390,0	78
12	ջրամատակարարում	800,0	759,3	94,9
13	երիտասարդական ծրագրեր	250,0	200,0	80
14	Մանկապարտեզի աշխատավարձ	3417,5	930,5	27,2
15	սոց. վճարներ	775,0	219,6	28,3
16	էներգետիկ ծառայություններ	225,0	100,0	44,4
17	Սնունդ	200,0	100,0	50
18	սուբսիդիա	3854,4	2783,5	72,2
19	սոց օգնություն	1000,0	950,0	95
	ԸՆԴԱՄԵՆԸ	19047,2	13793,7	72,4

Կիսամյակային գանձումները մուտքային մասով կատարվել է հետևյալ կերպ՝ 100 %-ից ցածր՝ հողի հարկը-95%, շենք շինության գույքահարկը-81%-ով, փոխադրամիջոցների գույքահարկը- 64,8%-ով, վարձակալական հողերի վճար-19,2%, այլ ոչ հարկային եկամուտներ-156,3%, տեղական տուրքեր-65,4%, իսկ ծախսային մասով ունեցել ենք տնտեսումներ:

Տեղի է ունեցել ավագանու 5 նիստ՝ 3 հերթական և 2 արտահերթ, ուր քննարկվել են բազում հարցեր: Համայնքի անապահով 27 ընտանիքների տրամադրվել է սոց օգնություն 950,0 հազ. դրամի չափով:

Համայնքի Կորյունի , Ագաթանգեղոսի, Հայկի փողոցներում անցկացվել է նոր խմելու ջրագիծ՝ համայնքի բյուջեից ծախսվել է 760,0 հազ. դրամ, աշխատանքները դեռ շարունակվում են: Անցկացվել է գյուղապետի 6 որոշում, 9 կարգադրություն: Համայնքի 2 բնակիչներին հայտարարվել է նկատողություն զենքի պահպանման կանոնները խախտելու համար:

Երիտասարդական աշխատանքների շրջանակներում կազմակերպվել և անցկացվել է միջոցառումներ նվիրված կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, հաղթանակի օրվա՝ մայիսի 9-ի առթիվ:

Համայնքի «Տեր և Տիկին Ղազարյանների անվան» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում կազմակերպվել և մեծ շուքով անցկացվել է մայրության օրվա՝ ապրիլի 7-ին, նվիրված հանդես ծախսվել է 100,0 հազ դրամ:

Կատարվել է շուրջ 360 համագյուղացիների ընդունելություն, որից 295-ին տրվել է տեղեկանքներ: Լուծվել են ընթացիկ այլ հարցեր:

Գյուղատնտեսական գարնանային նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև մկնանման կրծողների դեմ պայքարի նպատակով տրվել է հանձնարարականներ և աշխատանքների կատարման նպատակով ծախսվել է 97,2 հազ.դրամ:

Ավարտելով ելույթս համայնքի բնակիչներին խնդրում եմ ժամանակին կատարել իրենց հարկային պարտականությունները, քանզի դրանից է կախված մեր բնականոն և նորմալ աշխատանքը:

Ցանկանում եմ համայնքի ողջ բնակչությանը առողջություն, նորանոր հաջողություններ՝ պետության ամրապնդման, ընտանեկան և անձնական խնդիրների կարգավորման հարցում:

Ձեկոնաց գյուղի համայնքի ղեկավար /Ս.Ձեյնալյան/